Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.
պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:
**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

Բնական
սանդուղք

491.99-8
Ն-19

1905

5րդ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ԴԱՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ

# ԲՆԱԿԱՆ ՍԱՆԴՈՒԽ

## ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Հայերէն Այբուբենը եւ Ընթերցանութիւնը,
Զրուցատրութիւնը եւ Ուղղագրութիւնը
արագ, հիմնապէս եւ գործնականապէս
ուսանելու համար

ԳԻՐՔ ԵՒ ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ
ՅՈՎՀ. ՎԱՐԴԱՊԵՏԻ ՆԱԼՊԱՆՏԵԱՆ
ԵՊԻՍԿ. ՓՈԽ. Ե. ՀԱՅՈՑ

ՊԻԹԼԻՍ

معارف نظارت جليله سنك ٥٢٩ نومرولى و ف ١٨ ... تاريخلو رخصتنامه‌سيله طبع اولنمش...

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԱԳԱՅԵԱՆ
...թիա, Գուրունլու խան, թիւ 7

1905

491.99-8
Կ-19

11 JUL 2013

1005-10

51րդ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԴԱՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ

# ԲՆԱԿԱՆ ՍԱՆԴՈՒԽ

## ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Հայերէն Այբուբենը եւ Ընթերցանութիւնը, գրուցատրութիւնը եւ ուղղագրութիւնը արագ, հիմնապէս եւ գործնականապէս ուսանելու համար

ԳԻՒՏ ԵՒ ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ՅՈՎՀ. ՎԱՐԴԱՊԵՏԻ ՆԱԼՊԱՆՏԵԱՆ

ԵՊԻՍԿ. ՓՈԽ. Կ. ՀԱՅՈՑ

ՏԻՖԼԻՍ

ՎԱՃԱՌՄԱՆ ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻ
ԽՈՐԱՍԱՆՃԵԱՆ ԽԱՆ, ԹԻՒ 30
Սիրքէճի, Կ. Պոլիս

1905

ՀՍԽՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/III. 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՏՊԱՐԱՆ
ԵՒ
ԿԱԶՄԱՏՈՒՆ
ՍԱԳԱԵԱՆ
ԿԱԼԱԹԱ

معارف نظارت جلیله‌سنك ٥٢٩ نومرولی و فی ١٨ تشرین اول ٣٢٠
تاریخلو رخصتنامه‌سیله طبع اولنمشدر

# ԲՆԱԿԱՆ ՍԱՆԴՈՒԽ

## 1. ԴԱՍ.— ա. է. մ. ն.

Գիր.— *ա. է. մ. ն։*

Վանկ.— *ան, էն, մա, նա։*



Բառ.— *աննա, ամէն, է, ան, նման, (*) աննման։*

Խօսք.— *աման է ան։*

*աննման է.— ամէն աման նման է։*

*աննա մնա՞մ.— մամ, ամէնն մանէ՛, ամէ՞նն.— ամէն։*

---

## 2. ԴԱՍ.— ա. է. մ. ն. գ.

Գիր.— *ա. է. մ. ն. գ։*



Վանկ.— *գա, գէ, գէմ, ագ, էգ։*

Բառ.— *գամ, գամէ՛, գնա՛, գնէ՛, անագ, անգամ։*

Խօսք.— *գամ է ան.— գնա՛ գամ գամէ։*

*աննա գա՞մ.— ամէն անգամ անագ գնէ՛։*

(*) —Ծանօթ. Երբ իրարու յաջորդող բաղաձայնները միացնելու համար ձայն մը հարկ ըլլայ, այն ձայնը ը պիտի ըլլայ, բայց չի գրուիր, զոր օրինակ.—Նման—ընման կարդալու է մեղմիւ սեղմելով։

## 3. ԴԱՍ.— Ր

Գիր.— ա. է. մ. ն, գ. ր։

Վանկ.— րա, րէ, որ, էր, գէր, րէն։

Բառ.— րէ, գէր, մանր, ման-րէ՛, գրէ՛, էր։

Ր

Խօսք.— րէ է ան, րէն մանր գրէ։

արամ, մանր մանրէ՛, արագ գրէ՛։
արմէն գէր է։ աննա գար մարէր։
մարգար մարգարէ էր։

---

## 4. ԴԱՍ.— Ե

Գիր.— ա. է. մ. ն. գ. ր. ե։

Վանկ.— եա, եէ, եմ, նե, գե, րե, ներգ։

Բառ.— եմ, են, մեր, երգ, երգեմ, գերան։



Խօսք.— երգարան է ան, գերմաներէն է։

երգ երգե՞մ։
գերան մանրե՞մ։
գերաններն մեր՞ն են։
գէր եմ։
գամերն գամե՞մ։

---



## 5. ԴԱՍ.— Կ

Գիր.— ա. է. մ. ն. գ. ր. ե. կ։

Վանկ.— կա, կէ, կե, ակ, էկ, եկ, կեր, ներկ։

Բառ.— կրակ, կրակարան, մէկ, կամ, ներկ, երէկ։

Խօսք.— կրակարարան է ան, կրակ-ներ կան։

արմենակ, մէկ կրամ ներկ գնէ։
նարե՛կ, մէկ երկար նամակ գրէ՛։
մակա՛ր, կա՛մ կարագ կեր կա՛մ կանկար։
երէկ ագարակէն նկանակներ ե-կան։

---

## 6. ԴԱՍ.— Ը

Գիր.— ա. է. մ. ն. գ. ր. ե. կ. ը։

Վանկ.— ըմ, ըն, ըգ, ըր, ըկ, կը, մը, նը, րը, կըրկ։

Բառ.— ընկեր, ըրէ՛, կը գրեմ, երգը, կ՚ընեմ։

Խօսք.— ընկեր, մեր կրակը արագ-ըրէ։

մարգարը մեր նամակը կը գրէ՞։
երգը կ'երգեմ, մերը կ'երգեմ։
կար մը, ընե՞մ, կրնա՞մ, մ'ըներ։
կարագը կե՛ր, կարը կարէ։

---

7. ԴԱՍ.— ի

Գիր.— ա. է. մ. ն. գ. ե. ր. կ. ը. ի.

Վանկ.— իա, իէ, իմ, ին, իգ, րի, եի, կի։

Բառ.— ինն (ինը), գէր, եմ, գինի, գին, էի, էիր, էին։

Խօսք.— ինը է ան, աննման գիր մըն է։

Երէկ կիրակի էր, իմ մամին ինը կիներ եկեր էին, իմ երեմիայ ման-կիկը նարեկի գիրկն էր։

մարիամի երկիրը գարին գին կ'ընէ, իր գինիները կարմիր էին։

---



8. ԴԱՍ.— ս

Գիր.— ա. է. մ. ն. գ. ր. ե. կ. ը. ի. ս։

Վանկ.— սա, սէ, սմ, սր, սե, սկ, (ըսկ կարդա՛) սը, սի։

Բառ.— սագ, ասիկա, կէս, սկսիմ (ըսկսիմ), ներս, իսկ։



Խօսք.— սագ է ասիկա, կէս ամսա-կան է։

Ես այս ներսէսը կը սիրեմ, իմ միակ սէրն է, մեր կենարարն մեսիա։ սիրական ընկերս, իմ երեսս կար-միր է, իսկ ներսս կը մնի, սենեակս գաս նէ կ'իմանաս, սեր միս գնես, կը ներես, կ'սկսիմ։

---

## 9. ԴԱՍ.— ք

Գիր.— ա. է. մ. ն. գ. ր. ե. կ. ը. ի. ս. ք։

Վանկ.— քա, քէն, քըմ, գիք։

Բառ.— քերական, գիրք, մենք, ինք, էք, էիք, էինք։

Խօսք.— քերական է ասիկա, իմ գիրքս է։

*մենք երեք ընկեր ենք.— միքիա՛, քանի՞ ընկեր էք։*

*քսան ընկեր էինք, մէկ ամիս է՝ քսան երեք ենք։*

*քսակս կը քննե՞ս, քար են.— կեանքը երկինքն է, իսկ կիրքը երկիրն է.— ես ինքս կը քնանամ։*

---

## 10. ԴԱՍ.— լ

Գիր.— ա. է. մ. ն. գ. ր. ե. կ. ը. ի. ս. ք. լ։

Վանկ.— լա, լէ, լեմ, լեն, գալ, ըըլ, կալ, սալ։



Բառ.— լար, ալ, սլաք, ելլել, գալ, մսիլ, ելակ։

Խօսք.— լար է ան, աս ալ սլաքն է։

*ես կը սիրեմ սենեակէս ելլել, ագարակ մանգալ, ամերիկան քալել։*



*ինքնակալին սիրելի ըլլալ, ասխան քննալ, երկինք սլանալ, իրանելի մնալ.— կալը լալը լքէ՛, ելակն ալ կըլլէ՛.— քննանալը արգիլեա՞լ է, ներելի՞ է, կարելի՞ է։*

---

## 11. ԴԱՍ.— բ

Գիր.— ա. բ. գ. ե. է. ը. ի. լ. կ. մ. ն. ս. ր. ք։

Վանկ.— բա, բե, բէ, բը, բի, գաբ, կիբ, միբ, նըբ։



Բառ.— բնակարան, ամբար, բերք, բերել, բարեբար։

Խօսք.— բնակարան է աս, ան ալ իր բակն է։

*բննամենի ամբարները բերքեր կան, բերե՞մ։*

*բարեկամին բարիք ըրէ՛, բարերարն բարեբանէ՛։*

*երբեք մի՛ բարկանար, մի՛ արբենար։*

*բիբս կը բակեմ, բերանս կը բանամ.— ես երբեմն բնակարանը կը բնակիմ։*

*բարակ բանալին կը բակէ՞։*

---

## 12. ԴԱՍ.— Տ

Գիր.— ա. բ. գ. ե. է. ը. ի. լ. կ. մ. ն. ս. տ. ր. ք։

Վանկ.— տա, տե, տէ, տի, տու, տետ, ատ, դետ, նետ, կէտ։



Բառ.— տատրակ, գետին, նս-տիլ, գիտ-նալ, սիրտ, միտք։

Խօսք.— տատրակը տես գետնին նըս-տեր է, կեր կը գտնէ։

ամբաստի սիրտը տեսակ մը՝ միտքը տարբեր։
տիգրա՛ն, քրտներ ես, նստարան տամ՝ նստէ՛։
ստակ տամ, սանտր մը, մկրատ մը, տետ-րակ մը, տատը ալ մատիտ գնէ։
ատամս մատն ալ, մատնին ալ կը կտրէ։

---



## 13. ԴԱՍ.— Չ

Գիր.— ա. բ. գ. ե. է. ը. ի. լ. կ. մ. ն. չ. ս. տ. ր. ք։

Վանկ.— չա, չե, չէ, չը, չի, աչք, իչ, ինչ, չար, մինչ։

Բառ.— չամիչ, աչք, չար, չարչարանք, արարիչ, չինի։

Խօսք.— չամիչը կը տեսնե՞ս, ի՞նչ ը-նեմ, աչքս չի տեսներ։

բարի մանչին չամիչ, չար մանչին չաման։
մկրտիչը սքանչելի երգիչ մ՚է, չ՚երգե՞ր, չէ։
գրիչս չի գրեր, գիր չեմ գրեր.— չնչին մանչը քեզ չարիք կընէ՞, իր տէրը կը չարչարէ.— չինաստանի բնակիչներն երկնի արարիչն անգամ չեն գիտեր։

---

## 14. ԴԱՍ.— Թ

Գիր.— ա. բ. գ. ե. է. ը. թ. ի. լ. կ. մ. ն. չ. ս. տ. ր. ք։



Վանկ.— թա, թե, թը, թի, թաթ, թերթ, թիակ, կաթ։

Բառ.— թանկ, երթալ, թրքե-րէն, սագ, եթէ, կրթել։

Խօսք.— թիակ մ՚ալ գնէ, թի մըն ալ գտիր, թանկ չըլլան։

ես կ՚երթամ կաթ կթել.—աթանասի քիչ մը քերթէ՞ք։

անկիրթ մի ըլլաք, կրթարանս եկէք մերթ կը կրթեմ։

լիտր մը երկաթ, մեթր մը ալ երկաթէ թել գնէ, եթէ կրնաս։

թէ՛ ընթրիք ընեմ, թէ՛ արթննամ արարիչը միտքս կը բերեմ։

---

15. ԴԱՍ.— ո բառի սկիզբը վո կարդա՛

Գիր.— ա. բ. գ. ե. է. ը. թ. ի. լ. կ, մ. ն. ո. չ. ս. տ. ր. ք։

Վանկ.— ոգ, ոթ, ոլ, ոկ, ոմ, ոն, ոչ, ոտք, որ, ոք։

Բառ.— ոտք, ոտնաման, որբ, ոսկր, որս, որսալ, ոստրէ։



Խօսք.— ոտք է աս, ան ալ ոտնաման է։

մեր որբը, որքան որ չար է, ոչ ոք իրեն ստակ տալ գիտէ։

ո՛չ ոստրէն, ո՛չ ալ որթը կը սիրեմ.— ոլոռը թանկագին է, որսալը չարչարանք.— աս ոտքին ոսկորները բարակ են։

ոսկին ոչինչ է, իսկ ոգին անգին, տե՛ս որ ոմանք ոգին քիչ կը սիրեն քան թէ ոսկին։

---



16. ԴԱՍ.— ո՝ բառի մէջ և վերջը զուտ ձայնաւոր է։

Վանկ.— որո, նոր, կլոր, չոր, չորս, տոկոս։

Բառ.— լիմոն, թատրոն, ստամոքս, քրիստոս, մորենի։



Խօսք.— լիմոնը տե՛ս, քիչ մը կլոր է, երկիրս ալ անոր նման կլորակ է.— չորս թատրոն տեսեր եմ.— անտո՛ն, ստամոքս կը բորբոքի, գոնէ քիչ մը կարոս, կտոր մըն ալ նոր միս բեր։

մարտիրո՛ս, մարմարիոնը գլորէ՛. սիմէ՛ոն, մոմը մարէ՛. գէ՛որգ, գորգը կոկէ՛. գրի՛գոր, քրիստոսին նմանէ՛, մատթէ՛ոս, մորթս նորէն քերէ, մորենին չոր է։

---

17. ԴԱՍ.— (ո առանձին չի գործածուիր) հոս դասը ու ի վրայ է։

Ձայնաւոր գիրերն են.— ա. ե. է. ը. ի. ո. ւ։

Բաղաձայն գիրերն են.— կ. մ. ն. ս. տ. ր. ք։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ * С.С.Р.А. Публичная Библиотека * 7/XI · 1922 имени А. Мясникяна * Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ու երկբարբառին՝ երբ բաղաձայն գիր մը յաջորդէ, և կամ երբ բառ մը ու վերջաւորի, զուտ ձայնաւոր կարդա՛։



Խօսք.— կատուն ու մուկը, լուն ու մլուկը տե՛ս. — ուտելիք կը գտնամ իմ տունս, իսկ ես կը մուրամ.— անունս Սուրէն է, մականունս՝ Աւագեան։

կիրակին քրիստոնեաներուն սուրբ է, իսկ ուրբաթը՝ Թուրքերուն։

մենք արթուն կուսակալ ունինք. — ո՞ւր կ՚երթաս. — գումարը ուսանելու եմ, ուրեմն երկուք երկուք ալ չորս կ՚ընէ, չորս ալ՝ ութը. — երեք երեսուն՝ իննսուն կընէ։

արթուն մանչերուն ուսում տալու է, բարիները գուրգուրալու է, չարերը կրթելու է։

---

18. ԴԱՍ. — իւ երկբարբառի վրայ է դասը։

իւ ին երբ բաղաձայն մը յաջորդէ, զուտ ձայնաւոր կարդա՛։

Խօսք.— սիւն է աս, տե՛ս արիւնոտ է։

քրիստոնէութիւնը մարտիրոսներու արեամբ էութիւն ունի. — տէրութիւնը սիրէ, քրիստոնէութիւնը գրկէ ու սիրէ. — արտաքին մաքրութիւնը դիւրին է, ներքին սրբութիւնը բիւր բարիք է։

---



19. ԴԱՍ. — վ բաղաձայն գիր է.

Գիր.— ա. բ. գ. ե. է. ը. ի. լ. կ. մ. ն. ո. չ. ս. վ. տ. ր. ւ. ք։

Վանկ.— վա, վե, վէ, վի, վը, վու, գով, կով, քով, ով, սով։

Բառ. վրան, գովել, վաստկիլ, սերովբէ, վենետիկ, վիէննա։



Խօսք.— վրանին քովի վագրը կը տեսնե՞ս, նա սովոր է վնասներ ընելու։

Թովմաս վաթսուն կով ունի. — որբին վերմակ տուր, որ վրան դնէ, գիրք տուր որ բան սորվի. — սով է, վարունկ կե՛ր, սով՝ միավանկ է, վարունկ՝ երկավանկ։

ո՞վ է ան, սերովբէները ու քերովբէները երկինքէն վար կուգան ու վեր կը վերանան։

վենետիկեան ու վիէննական վանքերը գովելի վարքով ու կորովի մտքով վանականներ կան։

---

20. ԴԱՍ. — աւ, եւ երկբարբառներու վրայ է դասը։

աւ, եւ երկբարբառները երբ երկու բաղաձայններու մէջ, կամ երբ բառի մը վերջ դըտնուին աւ=ավ, եւ=եվ կարդա՛։

Խօսք.— արեւն է աս, — ես թեթեւ նաւ մը ունիմ, վըրան սեւ նաւթով ներկեր եմ, իրաւ որ լաւ է։



եսաւ անիրաւ է, իմ գրաւս և իմ կտաւս չիտար։

բարեւ ըրէ եւգինէին, կամաւ կը կատարեմ, թեւս կը մխի։

արմաւ բերաւ, կաքաւ գտաւ, կարգաւ կերան։

արեւն արեւմուտք մտաւ։

---

21. ԴԱՍ. — հ բաղաձայն գիր է.

Գիր.— ա. բ. գ. ե. է. ը. թ. ի. լ. հ. մ. ն. ո. չ. ս. վ. տ. ր. ւ. ք։

Վանկ.— հա, հե, հէ, հի, հո, հու, գահ, բահ, գոհ, հին։

Բառ.— հաւ, հաւկիթ, սահակ, հասնիլ, հունտ, հաստ։

Խօսք.— հաւ են ասոնք ահա, հինգ հատ են, հատիկ ալ ունին, հաւկիթ ալ։





վահան համեստ քալէ որ չսահիս, հրամանս կատարէ՛, որ գոհ ըլլաս, սահակին ալ հասնիս։

հոգիս հոկտեմբերի հովը կը սիրէ։

հարիւր հատ հաստ բահեր բեր, հերկենք և հունտերը սերմանենք, որ աբրահամին նման հարստանանք։

հին հալաւս կը հանեմ, նորն կը հագնիմ, որովհետեւ հարսնիք կ'երթամ։

---

22. ԴԱՍ. յ բաղաձայն գիր է, բառին սկիզբը հի կարդա՛.

Գիր.— ա. բ. գ. ե. է. ը. թ. ի. լ. կ. հ. մ. յ. ն. ո. չ. ս. վ. տ. ր. ւ. ք։

Վանկ եւ Բառ. — *յիրար, յարգելի, յովհաննէս, յիսուս։*

Խօսք. — *յովհաննեսը տե՛ս, յիսուսը կը մկրտէ։*

*յարգելի յակոբիկս, յատուկէն յարգանքներս կընեմ, յունիսին և յուլիսին կը յուսամ յարաբերութիւններ ընել, յարատեւ համբերէ՛ որ չյուսահատիս, համբերութիւնը կեանք է, յիմարին ալ մի յարիր որ չյարմարիս,*

---

23. ԴԱՍ. — յ *բառին մէջ կէս* եւ *ձայն ունի.*

*իսկ* ոյ = ուի *արտասանէ՛ եթէ իրեն բաղաձայն մը յաջորդէ. օրինակ՝ գոյն. իսկ* օյ *արտասանէ եթէ ձայնաւոր մը յաջորդէ, օրինակ՝ գոյութիւն, գոյական։*

Խօսք. — *գայլը տես քարայրի քով նստեր է։*

*իսրայէլի այգին յիսուն քայլ երկայն և երեսուն ալ լայն է. լաւ բոյսեր կան, սակայն վայրիներ ալ կան։*

*մայիս ամսոյն չե՞նք կրնար զայն վայելել։*

*մեր կայսրը երկայնամիտ է։*

*հայրս, մայրս և քոյրս միայն հրամայել գիտեն։*

*կոյրը լոյս չունի, հայելին գոյն չունի։*

---



24. ԴԱՍ. — յ՝ *բառի վերջը համր է.*

*բացառութեամբ քանի մը բառի վերջ կ՚արտասանուի իբր* Է, *օրինակ՝ հայ, վա՜յ, մակբայ, բայ, եւայլն։*

Խօսք. — *քահանայ է այս, ո՛վ որ քրիստոսին կը յուսայ, յարգոյ է. այն որ միայն մամոնայ կը սիրէ, սատանայ է։*

*այն որ մեսիային գալուստը կ՚ուրանայ, հրեայ է, ան որ ներկայ ըլլալը կը հաստատէ քրիստոնեայ է։*

*հիմայ կաթսայ մը կայ, յետոյ կասկարայ մը եւս կուգայ։*

*երեկոյ կրիայ մը գտայ, քարի վրայ, մեքենա՞յ է։*

*վա՜յ, հա՞յ ես, ի՞նչ է բայ մակբայ։*

---

25. ԴԱՍ. դ *բաղաձայն գիր է.*

Գիր. — *ա. բ. գ. դ. ե. է. ը. թ. ի. լ. կ. հ. մ. յ. ն. ո. չ. ս. վ. տ. ր. ւ. ք. և։*

Վանկ եւ Բառ. — *դար, դաս, որդի, արդէն, դոյլ։*

Խօսք. — *դանակը դետին դրի, այդ դալար դդումը կտրէ՛։*

*այս դրամով, դոյլ մը, դդալ մը և բուրդէ գնտակ մը գնէ՛։*

*անդրանիկ մարդն, ադամ, ընդդիմութեամբ արարչին հրամանին դէմ եկաւ, երկրորդ մարդն՝ յիսուս որդին՝ իր արիւնով մարդկութեան վէրքին դարման ըրաւ։*

*դանիէլը ընդունակ է, անդադար իր դասը կը կարդայ։*

*կենդանիները դեկտեմբերին դուրս չեն ելլեր, կը մնին. — երդում մի՛ ըներ։*

---

26. ԴԱՍ. — ց *բաղաձայն գիր է.*

Գիր. — *ա. բ. գ. դ. ե. է. ը. թ. ի. լ. կ. հ. մ. յ. ն. ո. չ. ս. վ. տ. ր. ց. ւ. ք. և։*

Վանկ եւ Բառ. — *ցանք, վեց, հաց, բայց, ցից, բոց, թաց։*



Խօսք. — *ցորեն ցանեցի, հասկը հասցուցի։*

*վեց հաց ունիմ. — քամին ցիցը կը փրցնէ, բայց աչացս արցունք կը բերէ։*

*աչքերուս համար ակնոց ալ, հովանոց ալ կը բանեցնեմ։*

*բերանացի կը սորվեցնեմ։*

*դրացի՛ հասկցա՞ր, լուցկին բոց հանեց, անցուր՝ հրդեհ կ՚ըլլայ. թաց փայտը չի բանիր, կոյր կացինը չի կտրեր։*

---



27. ԴԱՍ. — ծ *բաղաձայն գիր է.*

Գիր. — *ա. բ. գ. դ. ե. է. ը. թ. ի. լ. ծ. կ. հ. մ. յ. ն. ո. չ. ս. վ. տ. ր. ց. ւ. ք. և։*

Վանկ եւ Բառ. — *ծանր, կայծ, ծայր, ծիր, ծեծ, ծուր։*

Խօսք. — *ծնունդ յիսուսի, տե՛ս միածինը սուրբ կոյսէն կը ծնի, հովիւները ծունկի եկած են, մոգերն ալ ընծաներ բերած են։*

*դրչի ծայր և նամակի ծրար գնէ, այս գիծը ծիր է։*

*այծը ծիրան կ՚ուտէ՞։*
*ծանր քալէ, ծանր գործէ, որ մտածածդ ըլլայ։*
*կայծքարը կայծ կը հանէ։*
*ծերը մեծարէ, ծոյլը ծեծէ։*

---

28. ԴԱՍ. — զ *բաղաձայն գիր է.*

Գիր. — *ա. բ. գ. դ. ե. զ. է. ը. թ. ի. լ. ծ. կ. հ. մ. յ. ն. ո. չ. ս. վ. տ. ր. ց. ւ. ք. և։*

*զ գրին երբ բ. գ. մ. տառերը յաջորդեն այն ատեն ըզբ, ըզգ, ըզմ կարդալու է։ Մնացածը բնական է։*

Խօսք.— զմելին տուր՝ թուղ կտրեմ։

քու զէնքդ զմելի է, իմ զէնքս լեզուս է. զիս ալ, ազգականս ալ կ՚ազատեմ։

աբէլ սկիզբը կենդանի մը զոհեց. — մայրենի լեզուս է հայերէնը։

երազ կը զրուցե՞ս, չեմ հաւատար, քարոզի մտիկ կ՚ընեմ։

մեզի կաւ գնէ, հազար հատ գիրք կազմէ։

կուզի քամակը ընկոյզ կայ, ուզէ՛, տեսնամ կուտա՞յ։

---

29. ԴԱՍ. — ձ բաղաձայն գիր է.

Գիր.— աբգ. դեզ. էըթ. իլ. ծկ. հձ. մյ. նո. չս. վ. տրց. ւք. և։

Վանկ եւ բառ. — ձի, որձ, ձիրք, ձագ, ձուկ, բարձ, սանձ, սեւ։

Խօսք.— ձին տե՛ս, լաւ ձեւ ու ձիրքեր ունի։



երբ բերանը սանձ անցընեմ և սանձահարեմ, կը հնազանդի և երբ սանձը արձկեմ, մարդ չիհամարձակիր քովը անգամ մերձենալ։

ձուկ որսալը ձրի է հոս, ձկնորսը ձուկն ալ ձագերն ալ կ՚որսայ և կը ձանձրանայ։



չորսէն երկուք հանես, երկուք կը մնայ։

ձեր գանձը երկինքն է։

համբարձում վարժ դերձակ է։

---

30. ԴԱՍ. — ղ բաղաձայն գիր է.

Գիր.— աբգ. դեզ. էըթ. իլ. ծկ. հձղ. մյ. նո. չ. սվ. տրց. ւք. և։

Վանկ եւ Բառ. — վաղ, ուղտ, գիւղ, եղ, եղբայր, աղ, աղէկ։

Խօսք.— ղազարոս աղքատ էր, տե՛ս հարուստ հայր աբրահամին գոգն է։

ղազարոս իմ եղբայրս է. — եղիսաբէթ իմ մայրս, որ յղի է և մեղայ կըսէ, ես իմ ծնողքս կը սիրեմ ու վաղը ուղտով երուսաղէմ կը տանիմ։

կաթողիկոս մեր եկեղեցական հայրն է, կարողութին մաղթենք։

քաղաքացին գիւղէն հաց կ՚ուզէ, գիւղացին ալ քաղքէն զգեստ։

---

31. ԴԱՍ. — խ բաղաձայն գիր է,

Գիր.— աբգ. դեզ. էըթ. իլ. խծկ. հձղ. մյ. նո. չ. սվ. տրց. ւք. և։

Վանկ եւ բառ. — խակ, ծուխ, մուխ, խելք, ախտ, ձախ։



Խօսք.— *խաղողին ողկոյզը տես, խնձորն ալ ան է։*

*խակ խաղողէն լաւ քացախ կ՚ըլլայ, կը խնդրեմ, տո՛ւր խմեմ։*

*սոխակը կ՚երգէ, մեղուն կը խայթէ։*

*կանուխ քնացիր, որ կանուխ արթննաս, որ խելքդ տխմար չըլլար, մարմինդ ալ խախուտ չի մնար։*

*ծխախոտ մի ծխեր՝ ներսդ կը նեխի, ծուխին ու մուխին մխիրին ու քթախոտին ստակ ծախսելը անխելքութիւն է։*

*մի՛ խոստանար որ խաղաղ մնաս։*

---

32. ԴԱՍ. — ռ *բաղաձայն գիր է.*

Գիր.— *աբգ. դեզ. էըթ. իլ. խծկ. հձղ. մյ. նո. չ. ռսվ. տրց. ւք. և։*

Վանկ եւ Բառ. *առ, տառ, բառ, դուռ, ձեռք։*

Խօսք. *ռետին է այս, ա՛ռ այս թուրքերէն տառերը, աւրէ՛ ու գրաբար բառերը գրէ՛։*

*ռախմարը կռնակս կը ցաւցնէ, ռախմերը կուրծքս.*

*ձմեռը ձեռքս ձեռնոց կ՚առնեմ, իսկ ոտս ալ սառոյց։*



*դառնուկս ամառը անտառն է, ձմեռը ախոռը։*

*մառանին դուռը գոցէ։*

*ակռայ մի՛ խառներ։*

*քառասուն աթոռ առ։*

---

33. ԴԱՍ. — պ *բաղաձայն գիր է.*

Գիր.— *աբգ. դեզ. էըթ. իլ. խծկ. հձղ. մյ. նո. չպ. ռսվ. տրց. ւք. և։*

Վանկ եւ Բառ.— *կապ, պինդ, պէս, ղուսպ, սպառ, սպայտ, ոսպ։*

*պնակ մը ոսպով ապուր ու սպանախ կ՚ուտե՞ս,— ո՛չ, պանիր ու պատառ մը հաց հերիք է։*

*ինչ ձեռքերդ գրպանդ կը պահես ու կը զրուցես, նախ գուլպայիդ կապէ։*

*ինչպէս պատեանդ քու սուրդ պինդ պահած է, այդպէս բերանդ թող քու լեզուդ զուսպ կապէ։*

*բազմապատկութիւն սորվէ, երկու անգամ երեք վեց կ՚ընէ։*

*որբազան պիոս քահանայապետը կը բնակի հռոմմայ սուրբ պետրոսի և վատիկանի պապական պալատին մէջ։*

*Նալպանտեան վարդապետը է եպիսկոպոսական տեղապահ պիթլիզի։*

---

34. ԴԱՍ. — շ բաղաձայն գիր է.

Գիր. — աբգ. դեզ. էըթ. իլ. խծկ. հձղ. մյ. նշո. չպ. ռսվ. տրց. ւք. և։

Վանկ եւ Բառ. — շատ, էշ, մուշ, շուտ, ուշ, շուն, շիշ։

Խօսք. — շնակառքը տես, շունը կը քաշէ, այս շունը շատ գարշելի է, կուշտ է և շարունակ կը հաչէ ու շղթան կը կտրէ։



էշ ու դմէշ բերիր, շնորհակալ եմ;

շաբաթ կ՚սկսի, կիրակիէն յետոյ երկուշաբթի, երեքշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի, ուրբաթ և շաբաթ,

Ներսէս շնորհալին պաշտելի է, իր շարականը հրաշալի է,

մուշ մշուշ կայ, արշալոյս ուշ կը լուսնա՛,

35. ԴԱՍ. — ժ բաղաձայն գիր է.

Գիր. — աբգ. դեզ. էըթ. ժիլ. խծկ. հձղ. ճմյ. նշո. չպ. ռսվ. տրց. ւք. և։



Վանկ եւ Բառ. — ժամ. այժմ. ոյժ. խէժ. կոյժ. յոյժ. ժիր։

Խօսք. — ժամացոյց է աս, ժամերը կը զարնէ։



աս բժիշկը վիրաբոյժ ալ է, ժանտախտէն ազատեց, վէրքս ալ բուժեց։

բաժանումը սորվէ, ինը տանձ երեք մարդու բաժնէ, ամէն մէկին երեք տանձ կ՚իյնայ։

վարժատունը վարժապետին հրամանին համաձայն շարժէ։

այժմէն դժոխային բաներուն հրաժարում տուր որ դժոխք չժառանգես։

կոյժը տար որ ժիր ըլլաս, աշխատէ՛ որ ուժովնաս։

36. ԴԱՍ. — ճ բաղաձայն գիր է.

Գիր. — աբգ. դեզ. էըթ. ժիլ. խծկ. հձղ. ճմյ. նշո. չպ. ռսվ. տրց. ւք. և։

Վանկ եւ Բառ. — ճար, ճառ, ճաշ, լիճ, ճանճ, ոճ, սուրճ։



Խօսք.— Ծիծղունկը տես, իւր ճիչը հաճելի է, ճպուռը տես, ճռնչում կը հանէ ու կը ճայթի։

Հոս ճաշարան կա՞յ, ճամբորդութենէ ճարս կտրեր է, մահիճ պատրաստէ, ճրագ բեր, սուրճ շինէ, մուճակս, ճերմակեղէնս ո՞ւր են, ճամբէ գայ, ճաշն ալ պատրաստէ, առտուն նախաճաշիկ միայն կ'ընեմ ու պարտքս կը վճարեմ կերթամ; լիճը կը հասնիմ, չարաճճին ճակատէն կը ճանչնամ; վիճակ բանալ ոճիր է։

---

37. ԴԱՍ. — Ջ բաղաձայն գիր է.

Գիր.— աբգ. դեզ. էըթ. ժիլ. խծկ. հձղ. ճմյ. նշո. չպջ. ռսվ. տրց. ւփք. և։

Վանկ եւ Բառ.— աջ, ջահ, էջ, ջոջ, ջուր, ողջ, ջիղ, մէջ։

Խօսք.— Ջրաղացք է այս, տե՛ս ջորե-

# ԶՕՆ

Անդրանիկ երկս կը նուիրեմ երջանկայիշատակ Ստեփաննոս Պետրոս Ժ. Ազարեան Կ. Պատրիարքին, որոյ բարերարութիւնքը վայելած եմ ծննդավայրս Եօզղատէն սկսեալ՝ նախ ընդունուելովս չորեքտասանամեայ հասակիս Քաղկեդոնի Կաթողիկոսական կղերանոցի յարկաց մէջ, ուր Մեծաւորաց եւ կանոնաց իշխանութեան ներքեւ սկսայ կրթուիլ եւ տաճկաբարբառ լեզուովս ուսանիլ հայերէնն եւ այլ լեզուները: Երկու տարի յետոյ, նոյն հովուապետին շնորհիւ արժանացայ ընդունիլ Երանայիշատակ Արեւելասէր Լեւոն ԺԳ. Ս. Պապի ի Հռովմ հաստատած Լեւոնեան Հայ դպրոցին մէջ, ուր ութ տարի շրջանս աւարտելէ յետոյ, անարժանաբար բարձրացայ յաստիճան քահանայութեան: Քահանայութեանս ճիշդ հնգամեայ շրջանին տարեդարձի օրերուն մէջ գտած եմ այս միջոցը, զոր կ'ընծայեմ երիցս երջանիկ Ստեփաննոս Կ. Պատրիարքին:

*Որոյ եմ երախտապարտ յանգ.*

ՅՈՎՀԱՆՆԷՍ Վ. ՆԱԼՊԱՆՏԵԱՆ

ԵՊԻՍԿ. ՓՈԽ. ԿԱԹ. ՀԱՅՈՑ

14 Փետր. 1904

Պիթլիս

# ՔԵՐԱԿԱՆԻՍ ՄԷԹՈՏԻՆ ԾՐԱԳԻՐԸ
## ՈՒ ՏԻՏՂՈՍԻՆ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԸ

Քերականս բնական միջոցներով ու աստիճանաբար սկսնակ աշակերտը Հայերէնի ուսուցման մէջ յառաջ կը տանի, նախ՝ չորս գիր սորվեցնելով և ապա իւրաքանչիւր գիր ու երկբարբառ տարբեր տարբեր դասերու մէջ ճանչցնելով:

Այբբենը, ընթերցանութիւնը, զրուցատրութիւնն, ու վայելչագրութիւնը առջի դասէն իսկ կ'սկսի սորվեցնել: Գրերը կը ճանչցնէ, վանկերու կը վարժեցնէ, բառեր կը սորվեցնէ, զրուցատրութիւնը կը կարդացնէ, որով և կը խօսեցնէ: Վերջապէս ձեռագիր օրինակներով և շարագրութեամբ վայելչագրութիւնը կ'ուսուցանէ ուղղագրութեամբ հանդերձ:

Պատկերազարդ առարկաներով մանկանց մտքին մէջ գիրը և բառի նշանակութիւնը կը տպաւորէ, վասն զի իւրաքանչիւր դասի վերաբերեալ գրոյը կ'սկսին պատկերաց բառերը, զորօրինակ, դամ—Գ. կրակարան—Կ. սաղ—Ս. ևայլն:

Արագընթաց, գործնական ու հիմնական ըլլալը՝ գիւտ ու աշխատասիրութիւն յորջորջուելն ալ՝ ուսուցչաց քննադատութենէն և աշակերտաց արդիւնաւորութենէն պիտի իմացուի:

---

# ՈՒՍՈՒՑՉԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Պատուարժան ուսուցիչը՝ գրերու, վանկերու և բառերու վարժութիւններ ընել պիտի տայ գրատախտակին վրայ:

Բառերու իմաստը՝ ըստ բուն նշանակութեան և ըստ գործածութեան՝ սորվեցնելու պիտի աշխատի:

Խօսքերը՝ բերանացի պիտի սորվեցնէ աշակերտաց, որպէս զի զրուցատրութեան վարժուին, և նոյնը պիտի ընդօրինակել տայ, որպէս զի ձեռագիր վայելչագրութիւն սորվին:

Քերականիս դժուարութիւնքը պիտի հարթէ աշակերտաց առջեւ, և անոնց պիտի առաջնորդէ պակասը լրացնելով և կանոնները բացատրելով:

Իր դիտողութիւնքն ալ պիտի հաճի հեղինակին պարզել որպէս զի Բ. տպագրութեան բարեփոխուի, վասն զի միամեայ գիւտ և աշխատասիրութիւն մը՝ միայնակ պաշտօնավարութեան մէջ, թերութիւններէ զուրկ չ'ըլլար:

---

# ՀԵՂԻՆԱԿԻՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Հեղինակն այս մէթոտին ու գիւտին ըստ ամենայնի տէրն է և տարբեր կերպերու ու լեզուներու վերածելու և տպագրելու մենաշնորհն իրեն կը վերապահէ:

Թ. Վ. Ն,

*պանը ջորիով ցորեն բերած է որ աղայ, ջուրը վերէն կ'իջնէ, և ամբողջ ցորենը ալիւր կը շինէ։*

*Ջրհեղեղը վերջացուց մեղքը։*

*Ջոջ պահոց մէջ բաղարջի միջուկին մէջ կոճակ կը պահեն։*

*Խնջոյքէն առաջ մունջ, յետոյ տրտունջ։*

*Առաջնորդին շուրջառ տուր։*

---

38. ԴԱՍ. — Օ ձայնաւոր գիր է.




Գիր.—*աբգ. դեզ. էըթ. ժիլ. խծկ. հձղ. ճմյ. նշո. չպջ. ռսվ. տրց. ւփք. և օ։*

Վանկ եւ Բառ. — *օր, օղ, տօթ, տօն, օձ, զօրք, եօթ։*

Խօսք. — *օդապարիկը տե՛ս, օդը կը հանեն և զբօսանք կ'ընեն, ի՞նչու, եօղղատցի կարմիր մօրուքով կրօնական մը որ օտար երկրի*

մէջ վարդապետ օծեալ է, օգոստոսի տօթագին օրերուն, սուրբ կուսին տօնին յարմար՝ համառօտ քարոզ խօսելէն յետոյ, միջօրէին ժամը եօթին ալ կոյսը օրհնաբանելով, օդապարիկ մը օդը հանեց։

անօթի եմ, տե՛ս, գօտիս թուլցաւ։

կօշիկիս տակ օձ մը կայ։

հօրեղբօրս օրհորդը օրօր ըսելով որ կ՚անցընէ։

---

39. ԴԱՍ. — փ բաղաձայն գիր է.

Գիր. — աբգ. դեզ. էըթ. ժիլ. խծկ. հձղ. ճմյ. նշո. չպջ. ռսվ. տրց. ւփք. և օ։

Վանկ եւ Բառ. — ափ, փարչ, փուր, փոր, փուշ, փունջ, չափ, փորձ։

Խօսք. — փարչին մէջ ափ մը լեցուն ջուր կայ։

փղոսկրը ամուր ոսկոր է, փշատը ամուր փայտ է։

անփորձ ծառը փորձանքի փոխեցիր, փորձառուն գէթ փրկեց, խաչափայտին փառք տուր։

օդաչափ և ջերմաչափ ունիս, խնդրեմ ալ չափը փնտռէ՛ գտի՛ր։

փախուկը փետուրի կը նմանի, փոփոխականը փուքի։



փութաջանին ափը փունջ մը ծաղիկ՝ իսկ գլխուն դափնի կը դնեմ, ցոփին ափը փունջ մը փուշ՝ իսկ գլխուն փոշի կը ցանեմ, փնթիին ալ փշրանք ու փեճոկ կուտամ։

---

40. ԴԱՍ. — աւա, աւե, աւէ, աւը, աւի, աւո, աւօ.

Աւ երկբարբառին երբ ձայնաւոր մը յաջորդէ, ւը վ կարդա։



ցախաւել



աւել

Խօսք. — աւել սա ու նաւակը աւլէ, ցախաւելով դաւիթը աւլէ։

աւազանը բաւական ջուր կայ։

ծարաւի եմ՝ դաւաթ մը ջուր տուր։

գաւազանը իրաւամբ բռնաւոր դատաւոր է։

աւետարանը փրկաւէտ է՝ կը հաւատամ։

*գրիգոր լուսաւորիչ զմեզ խաւարէն հաւատ-քի բերաւ։*

*կեղծաւորը գոնաւոր է, փորձաւորը զգու-շաւոր է, մեղաւորը թող խաչին ապաւինի։*

*առաւօտ է, հաւը կանչեց։*

---

41. ԴԱՍ.— *եւա, եւե, եւէ, եւը, եւի, եւո.*

Եւ *երկբարբառին երբ ձայնաւոր մը յաջոր-դէ* ւ *գիրը* վ *կարդա՛։*

Խօսք.— ***եւայի մեղաց հետեւանքն այլ և այլ հոգեւոր ու մարմնաւոր վը-տանգաւոր երեւոյթներ երեւան հա-նեց։***

*լեւոն եղբայրս երեւելի գրագէտ է։*

*երկրիս մակերեւոյթը ջուրէ ու ցամաքէ կը ձեւանայ։*

*արեւելքէն կուգամ ու դէպի հարաւային բեւեռ կ'երթամ։*

---

42. ԴԱՍ. — իւ=իվ *կարդա՛.*

իւ՝ *բառի վերջը* իվ *կարդա, դարձեալ երբ* իւ*ին ձայնաւոր մը յաջորդէ* ւ *տառը* վ *հնչէ.* ազնիւ, ճիւաղ:

Խօսք.- ***ազնիւ հիւանդը աւետարա-նին կը հաւատայ ու կը համբերէ,***



*իսկ անպատիւ հիւանդը խստիւ ճիւաղ կը հանէ, կարծես թէ դիւահար է, ու կռիւ կ'ընէ։*

*հովիւը արծիւ մը բռնեց, ստուգիւ հազիւ բռնեց։*

*առաջ թիւ սորվէ՝ յետոյ հաշիւ։*

---

43. ԴԱՍ. — *ուա, ուե, ուէ, ուի, ուը, ուո, ուօ.*

Ու *երկբարբառին երբ ձայնաւոր մը յաջորդէ* ու ը վ *կարդա՛։*

Խօսք.— ***աստուած* 10 *պատուիրանք-ները տուաւ մեզի։***

*տարեգլուխը յունուարէն կ'սկսի, յետոյ փե-տրուար կուգայ։*

*նուագարանը զզուանք կը ցրուէ։*

*հարուածը կաթուած բերաւ։*

*մի՛ քաշուիր դժուարէն որ վարժուիս։*

*թշուառականը չուանով կապէ, աղուականը կռուանով բռնէ. (բացառութիւն են՝* ալէլուիա, *և ասոր նման օտար բառեր)։*

---

44. ԴԱՍ. — *ւո, ւու, ուու.*

ւո=վո *կարդա՛,* ւու=վու *կարդա՛,* ուու=ը-վու *հնչէ։*

Խօսք.— ***երկուորեակ զաւակներս բանուոր էին։***

լաւութիւն ընողը երախտիք ունի քաւութի[ւն]
պահանջելու։

փոխատուութիւնը ազնուութիւն է։

եթէ պատասխանատուութիւնը մերժես, ան-
պատուութիւն կը շահիս։

---

45. ԴԱՍ. — Ֆ բաղաձայն գիր է և վերջին գիր[ը]

Ֆ գիրին տեղը հայերէն փ գիրը կը գոր-
ծածուի ստէպ։

Խօսք. — Ֆրանք մը տուր որ Ֆիզի-
քական գիրք մը գնեմ։

Ֆրանսացի Ֆրէր մը կանչէ որ Ֆրանսերէ[ն]
խօսիմ։ — Ֆէ գիր գրէ։

---

Տառերուն անունները

այբ, բեն, գիմ, դա, եէջ, զա, է,
ըթ, թօ, ժէ, ինի, լիւն, խէ, ծա,
կեն, հօ, ձա, ղատ, ճէ, մեն, յի, նու,
շա, վո, չա, պէ, ջէ, ռա, սէ, վեւ,
տիւն, րէ, ցօ, հիւն, փիւր, քէ,
եւ, օ, ֆէ։

---



Այբուբէն՝ գլխագիր

Ա. Բ. Գ. Դ. Ե. Զ. Է. Ը. Թ.
Ժ. Ի. Լ. Խ. Ծ. Կ. Հ. Ձ. Ղ.
Ճ. Մ. Յ. Ն. Շ. Ո. Չ. Պ. Ջ.
Ռ. Ս. Վ. Տ. Ր. Ց. Ւ. Փ. Ք.
Օ. Ֆ.

---

Ձայնաւոր տառեր են

ա, ե, է, ը, ի, ո, ւ, օ.

Բաղաձայն գիրեր են

բ, գ, դ, զ, թ, ժ, լ, խծկ, հձղ,
ճմյ, նշ, չպջ, ռսվ, տրց, փ, ք, ֆ։

Երկբարբառներ

աւ, եւ, իւ, ու, ւու, իո, ուա։

---

ՎԵՐՋ

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI-1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

# ՆՈՐ ԴՊՐՈՑ

## ՆԱԽԱԿՐԹՈՒԹԵԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔ

### ՀԱՄԱԿԵԴՐՈՆ ԴՐՈՒԹԵԱՄԲ

---

1°.—Դպրոցական տարին 10 ամիս ըլլալով՝ ՆՈՐ ԴՊՐՈՑՆ ալ տաս[ը] Պրակներու բաժնուած է։ Մէն մի Պրակ կը պարունակէ մէկ ամսուան մէ[ջ] ուսանելի առարկաներէն ամէն այն ճիւղերը որ պարտաւորիչ են Նա[-]խակրթութեան Դասընթացքին համար։

2°.—Դասերու աւանդումը ճշդող ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑը տպուած [է] Վեցերորդ Պրակին մէջ։ Իսկ շաբաթական ԴԱՍԱՑՈՒՑԱԿները որոշուա[ծ] են Թ. Պրակին կցուած յաւելուածական թերթով մը։

3°.—ՆՈՐ ԴՊՐՈՑի պարունակութեան և մէթոտին վրայ մանրա[-]մասն խօսուած է ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԾԱՆՈՒՑԱԳԻՐ անուն մասնաւո[ր] Պրակին մէջ (որ փափաքողներուն կը ղրկուի), ինչպէս և Ա. Պրակի[ն] սկիզբը։ Անոնց ընթերցումը կը յանձնարարենք ամէն Ուսուցչի։

4°.—ՆՈՐ ԴՊՐՈՑը հիմնուած է Համակեդրոն Դրութեան վրայ, հե[-]տեւողութեամբ Ուսուցչապետ Ա. Սէնեէղի համանուն գործին, որ մե[-]հուչակ հանած է և կը գործածուի Եւրոպական առաջնակարգ դպրոցնե[-]րու մէջ։

5°.—ՆՈՐ ԴՊՐՈՑին շնորհիւ կարելի կ'ըլլայ հաստատել կանոնա[-]ւորութիւն և միօրինակութիւն բոլոր Հայ դպրոցներու մէջ ուր ըն[-]դունուած է։

6°.—ՆՈՐ ԴՊՐՈՑը ամէնէն լուսամիտ առաջնորդն է Հայ Ուսուց[-]չին և անոր կը թելադրէ ժամանակակից կրթութեան ոգին և մանկա[-]վարժութեան գործնական եղանակները։

7°.—ՆՈՐ ԴՊՐՈՑը կարելի է ստանալ զատ զատ Պրակներով [կամ] կամ 10 պրակը միասին կազմուած։

8°.—Ամբողջ 10 Պրակին գինն է Պոլսոյ համար **30** ղրուշ, գա[-]ւառներու համար **35** ղրուշ, արտասահմանի համար **8** ֆրանք (**3**րուպլի)։ Փոսթի ծախքը մեր վրայ է։

9°.—Պրակները զատ զատ կը ծախուին **5**ական ղրուշի։

10°.—Տասը ձեռք մէկէն գնողը 1 ձեռք նուէր կը ստանայ։

آستانه‌ده سركه‌جيده خوراسانجيان خانده سمباط داوديان

Հասցէ. — ՍՄԲԱՏ ԴԱՒԹԵԱՆ

Խորասանճեան խան, Սիրքէճի, Կ. Պոլիս

# ԴԱՒԹԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

| | | | |
|---|---|---|---|
| 1. Ա. Վարժութիւն Մանկանց | 10րդ Տիպ | | 3,. |
| 2. Բ. „ „ | 4րդ | „ | 4 |
| 3. Գ. „ „ | 6րդ | „ | 5 |
| 4. Տարրական Քերականութիւն | 5րդ | „ | 2 |
| 5. Լրացուցիչ Դասընթացք | 3րդ | „ | 3 |
| 6. Փունջ, աշխարհ. Հատընտիր | 5րդ | „ | 3 |
| 7. Փնջակ, պատկերազարդ | 5րդ | „ | 1, |
| 8. Երկրորդ Փունջ (նոր տիպ) | 4րդ | „ | 6 |
| 9. Գործն. Ընթացք Տառագրութեան | 3րդ | „ | 3 |
| 10. Բանալի Տառագրութեան | 2րդ | „ | 7 |
| 11. Ընտելարան Հայ Լեզուի | 6րդ | „ | 2 |
| 12. Սկզբունք Համաձայնութ. եւ Տարադասութեան | 2րդ | „ | 3 |
| 13. Nouvelle Méthode. I. Տիկին Սաթինիկ | 2րդ | „ | 2 |
| 14. Տարր. Ընթացք Կրօնի, Վ. Քհնյ. Ասլանեանի | 3րդ | „ | 2 |
| 15. Պատկերազարդ Այբբենարան [նոր ձեւով] | 6րդ | „ | 2 |
| 16. Ցուցագիր Դաւթեան Գործակցութեան | 6րդ | „ | 2 |
| 17. Ծաղկաքաղ Հատընտիր, միջին շրջան | 2րդ | „ | 4 |
| 18. Դպրոցավարութիւն, գործ E. E. White-ի | | | 5 |
| 19. Առածապատում | | | 5 |
| 20. Համառօտ Կրօնագիտութիւն | 2րդ | „ | 3 |
| 21. Սրտի ձայնը | | | 5 |
| 22. Նուէր Հայ մանուկներուն, (պատկերազարդ) | 2րդ | „ | 1,2. |
| 23. Դասախօսութիւն Աղջիկներու | | | 3 |
| 24. Հսկի, գիտութիւններու վրայ դասեր | | | 3 |
| 25. Դասախօսութիւն Պատանիներու | | | 3 |
| 26. ԲԻՒՐԱԿՆ լրագիր, ազգագրական, տարեգին | | | 100 |
| 27. Աշխարհագրութիւն Օսմ. Կայսրութեան | | | 3 |
| 28. Քերթուածներ | | | 5 |
| 29. Տղոց Կրօնագիտութիւն | | | 5 |
| 30. Թուաբանութիւն մետրական դրութեան | | | 5 |
| 31. Առաջնորդ Անգղ. Լեզուի | | | 5 |
| 32. Եվանճէլին, Լօնկֆէլլօ | | | 5 |
| 33. Օսմ. Տաղաչափութիւն | | | 5 |
| 34. ՆՈՐ ԴՊՐՈՑ, 10 պրակը (փոքրայի ծախով) | | | 25 |
| 35. Շրջաբերական „Նոր Դպրոց"ի | | | 5 |
| 36. Լիակատար Գրացուցակ | | | |
| 37. Ծաղկաքաղ Քրիստ. Վարդապետութեան | | | 4 |
| 38. Հանգիստարան Բարոյագիտութեան, Ս. Դաւթեան | | | 6 |
| 39. Մտքի խաղեր, Թ. Թէրզեան եւ Տօմբօ | | | 5 |
| 40. Ուղեցոյց Գ. Վարժութեան, դասատուներու համար | | | 5 |
| 41. Իրագիտութիւն Համառօտ (մտամարզական ձեւով) | | | 3 |
| 42. Nouvelle Méthode. II. par Mme. Satinik | | | 4 |
| 43. Բացատրութիւն Ս. Պատարագի, Կրօն. Քահ. | | | 5 |
| 44. Մայրենի Լեզու, Ե. Տարի | | | 2,2. |
| 45. Դեղանին Զրանցին, Օր. Մէրի Աղասեան | | | 5 |
| 46. Ծրագիր Ազգ. Նախակրթութեան | | | 5 |
| 47. Ը. Մայր. Լեզու Դաւթեան | | | 5 |
| 48. Համակ Նոր Գրականութեան | | | 7 |
| 49. Նոր Ընթացք Ֆրանսերէնի | | | 3,2. |
| 50. Արուեստ Լուսանկարչութեան, Յակոբ Ն. Թէրզեան | | | 3 |
| 51. Ընական Սանդուխ, Յովհ. Վարդապետի Նալպանդեան | | | 3 |
| 52. Նոր Ուխտի Կտակարան | | | 4 |

Հասցէ՝ ՍԱՐԳԻՍ ԴԱՒԹԵԱՆ, Խօրասանճեան խան, Սիրքէճի

ՀՀ Ազգային գրադարան
NL0241686

9148